

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ Տ. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՆՇԱՆՆԱՆԻ

Յիշատակարան 1917 Յունուար 1-էն:

Սպամ կը հեռանայ պահ մը եւ քամի մը ուրիշ սպամներու ընկերացած կը վերադառնայ: Այնտեղ կը կազմուի յամձնուի արձանագրութիւնը եւ մերկայ հրաւիրակները կը ստորագրեն: Յետոյ ամէնքը միասին ձիաւոր կը մտնեն քաղաք, կը դիմեն քաղաքապետարան, որում բանալիմ փոխքաղաքապետը կը յամձնէ Ամգլիացի սպայիմ, որ կը ստանայ եւ մօրէմ կը դարձնէ: Ապա կ'երթան փոստ հեռագրատուն: Սպամ բոլոր սենեակները կը կղպէ ու ամէմուն առջեւ մէյմէկ տեղական բօլիս կը դնէ: Երբ ասոնք տեղի կ'ունենայիմ, բնակչութիւնը արդէն սկսած էր փողոցները խռուիլ ու ամէմուրեք խանդավառութիւն կը տիրէր: Ժամը 11-էն սկսեալ անգլ. զինուորներու ջոկատներ հեծելանուաւոր, ձիաւոր ու հետեւակ, խումբ խումբի քաղաք մտան Յոպպէի ու Քերրոմի ճամբաներէն: Տասնեւվեցօրեայ զիշեր ու ցերեկ անդադար աշխատութեմ թէպէտ պարտասած, բայց ոչ մէկը եռանդ ու կորով չէր կորսնցուցած: Պատմական Քաղաքիմ մէջ յաղթական մուտքը կարծես ամէմուն մօր ոգեւորութիւն կը մերձէնէր: Հետզհետէ հասած օթոմոպիւներ, բեռան կառքեր, ուղտերու կարավաններ պաշար ու պիտոյքներ բեռցած: Երեկոյեան դէմ Երուսաղէմը գրաւող զօրագունտի հրամանատարը փոստատան առջեւ խռուած ժողովուրդիմ յայտարարութիւն մը ուղղեց պատուիրելով, որ ամէնքը միամտաբար ու համդարտութեամբ իրենց գործերով, հոգեւորականութիւնմ ալ աղօթքով ու պաշտամունքով պարապիմ: Ամգլ. բանակիմ մէջ քամի մը հատ զինուորներ կան, որոնցմէ Տիրամ Ամպարնեան Սելանիկցի թարգման եւ Միմաս Յակոբեան Զէյթունցի առաջնորդ բանակիմ, վանք զիշերեցիմ ու քամի մը ժամ միասին ամցուցիմք: Օսմանեան բանակէն մնացորդները Զիթնեաց լեռան վրայ դիրք բռնած էին ու կը դիմադրէին: Ամգլիացիք միմէն երեկոյ ոմբակոծեցիմ եւ յարձակմամբ գրաւեցիմ լեռը, Թուրքերմ ալ քշեցիմ դէպի արեւելք Բէթամիայի կողմը: Կ'ըսուի թէ երկու հազարի չափ Թուրք գերիներ բռնուած են այսօր, բացի վիրաւորներէ:

Նոյ. 27, Բշ.: Քամի մը օր առաջ՝ Դամասկոս դրկուած Լատիմ պատրիարքի փոխանորդ Մոմսէնեօր Բիքարտօի վախճանելում լուրը հասած ըլլալով, այսօր առտում 8:30-իմ պատրիարքամիտ եկեղեցիիմ մէջ հոգեհամստեան պատարագ ու պաշտօն կատարուեցաւ: Մեր պատրիարքարանի կողմէ գացիմք ես եւ Երուսաղէմ վրդ. Փերտահնեան: Միւս միաբանութիւններմ ալ մերկայացուցիշներ ունէին:

Քաղաքի ամէն կողմերը եզրպտական բանակի ընդհ. հրամանատար ժեներալ Էտմոնտ Ալէմպիի յայտարարութիւնը փակցուեցաւ ուղղուած Երուսաղէմի ժողովուրդիմ, թէ այսօր-ուրմէ քաղաքը անգլիական վարչութեան տակ մտած է, կրօնքներու ազատութիւնը, սուրբ տեղերը, պատմական վայրերը, կրօնական հաստատութիւնները եւ իրաւունքները պիտի յարգուին ու կը յորդորէր բնակչութիւնը խաղաղօրէն զբաղիլ իր գործերով:

Ամէն ազգերու հոգեւոր պետերու մերկայացուցիշներում եւ երեւելիներում հրաւեր եղաւ կէսօրէ վերջ ժամը երկուքիմ երթալ Տէօյէ Բալէթիմա պանկ, որ առժամեայ կառավարչատուն եղած է: Պայմանեալ ժամում ամէնքմ ալ երթալով մերկայացուեցան անգլիացի զինուորական կառավարչիմ՝ ժեներալ Պորթոն: Հայոց կողմէ կայիմ Գիւտ Եպս., Դաւիթ Վրդ., ես ու Երուսաղէմ վրդ.: Զինուորական կառավարիշը յայտարարութիւն մը կարդաց, որ արաբներմի թարգմանուեցաւ: Պարունակութիւնմ էր հետեւեալը:

1.- Ամգլ. բանակը գրաւելով Երուսաղէմը ազատեց զայն 400 տարում թրքական բռնապետութեմէն: Ժողովուրդը այսուհետեւ կրնայ ամգլ. արդար կառավարութեան հովանիմ մերքեւ ապրիլ խաղաղութեամբ:

2.- Հոգեւոր պետերմ կը խնդրուի օգնել մօր կառավարութեան, յորդորելով իրենց ժողովուրդները կարգապահութեմ չլեղելու, միմէն որ քաղաքայիմ վարչութիւնը կազմակերպուի:

3.- Ամէն անոնք, որ զեմք ունին միմէն 36 ժամ պէտք է յամձնեն Ռուսաց վանքը, զինուորական ոստիկանութեան:

4.- Զինուորական փախստականներմ ամպայման պէտք է ամձնատուր ըլլան միմէն 24 ժամ:

5.- Զինուորական ամբարանոցները ու պաշտօնատուները գրառուած պաշարեղէն, կահկարասիք եւլմ. պէտք է յամձմուիմ միմչէն 24 ժամ:

6.- Բացարձակօրէն արգիլուած է ոգելից ըմպելեաց վաճառումը, մասնաւորապէս զինուորներու:

7.- Զգոյշ ըլլալ հեռագրի ու հեռաձայնի թելերը վնասելէ:

8.- Պաշարման վիճակ հաստատուած ըլլալով, երեկոյեան արեւամուտէն վերջ արգիլուած է տուներէն դուրս ելլել:

Ի վերջոյ կը յամձմարարէ, որ առաջիմ օրերը իմքը չափազանց զբաղուած ըլլալով, այդ միջոցիմ որեւէ խմորով իրեն դիմում չըլլայ: Մուկնտիկի միջոցաւ այս յայտարարութիւնը հաղորդուեցաւ բնակչութեան: ՄուֆթիԱհմետ Քէամիլ էֆէնտի Հիւսէյնի խմորակցութիւն յայտնեց Անգլ. գրաւումիմ ու յաղթական մուտքիմ համար ու ըսաւ՝ թէ ամէն ոք իր կեանքը, իմչքն ու պատիւը կը յամձմէ մոր կառավարութեան, վստահ ըլլալով անոր արդարասէր վարչութեան վրայ: Կառավարիչը շնորհակալ եղաւ:

Ամբողջ օրը կենդանի շարժում մը կը տիրէր քաղաքիմ մէջ, որ երեկուան մամ տօմական երեսոյք մը առած էր: Զինուորական վաշտեր, կառքեր, օթոմոպիլմներ, ուղտերու եւ ջորիմներու կարավանմներ կը մտնէիմ ու կ'ելլէիմ անվերջ: Պատերազմը միմչէն երեկոյ շարունակուեցաւ Բեթամիայի ու Ռամալլայի կողմերը, ուր թրջական վերջապահմներ կը կուռիմ տակաւիմ, պաշտպանելու համար բանակի մահամջը: Իրիկուան դէմ թուրքերը վտարուեցան իրենց դիրքերէմ, զոր գրաւեցիմ Անգլիացիք:

(շարունակելի)